

թիւնով, որու հետեանքով և անտեսական բարեկեցութեամբ. հակառակ պարագային ցեղը կը քայքայուի, ու անհատները կ'երթան մասնկ բարեկամ ցեղերու մէջ. կը պտտահին պարագաներ ալ և ահա կորսուած ցեղի անհատը կը զօրանայ ու մուսացութեան ու ինկածութեան ենթարկուած իր ցեղը կը վերականգնէ, չուրջը հաւաքելով ցան ու ցրիւ եղած բեկորներն ու սերունդները ուրիշ ցեղ մը ենթարկելով իր նախկին բաղդին:

Բաֆֆին ցեղերու մասին իր «Տաճկահայք»-ի մէջ կ'ըսէ. «Միայն Վասպուրականի մէջ» կարելի է հաշուել հարիւրքսան միմիանցից տարբեր ցեղեր, որոնք զանազանվում են բարբառներով, սովորութիւններով ու մինչև անգամ կրօնքով»:

Իսկ ես Մոկսի մէջ տեղեկացայ որ այնտեղ հարիւրաւոր բէգեր կային, որոնցմէ ամեն մէկը անկեալ ցեղի մը սերունդէն էր, և որոնք չը նայելով իրենց մերկ թշուառութեանը, կ'ուզէին դարձեալ պահպանել բէգական անունը, ու կողմնա-

Հայտնացիք.— Քրդաց մեծագոյն ցեղերից մինն է այս որ իր բարբառութեամբ մեծ հռչակ հանած է, որոնց գլխաւորն է Բաղնոսի Քէօռ Հիւսէյն փաշան: Այս ցեղը կը բնակի Բաղնոց, Ալճաուազ, Ականց, և Վանայ կուսակալութեան Հիւսիսային մասը:

Զարիկցիներ. Բաեա ժողովրդից մի բազմամարդ ցեղ են Զարիկցիները, խաղաղ աշխատաւոր ժողովուրդ են: Ասոնք լեզուով և դասնանքով կը տարբերին միւս միւսիւմաններից և խրվրվաւ կը կոչուին. բայց մի մասը կը բնակին Խնուս, Շուշար, Դերջան, վերջապէս Քղի, Տէրսիմ: Ասոնք կը խօսին Զարիկցերէն մի լեզու որ թէ՛ և Զազաների լեզուն կը նմանի, սակայն բոլորովին տարբեր լեզու է:

Թերքմանցիք.— Այս ցեղը կը բնակի Տիգրանակերտի կուսակալութեան մէջ, Հէնի Արդանա և շրջակայքը, լեզուն է Զազաներէն. երկրագործ ժողովուրդ են:

Տմիլներ. Աշխատաւոր երկրագործ ժողովուրդ, որ կը բնակի Խանջուկ, Բալու. ճապաղջուր և Կէնճ. լեզուն է Զազաներէն:

Լօլանցիներ եւ Խօրմցիներ.— Ասոնք խաղաղ աշխատաւորներ են, Բաեա դասակարգին պատկանող, կզբաղին երկրագործութեամբ, և կը բնակին Կոյնուկ, և Վարդօ գաւառներու մէջ. իրենց լեզուն եւ Զազաներէն է:

Այս ցեղերի որոշ թիւը յայտնի չէ, որովհետեւ կանոնաւորապէս արձանագրուած չեն, սակայն յամենայն դէպս միլիոնից աւելի են»: